ԳՈԼՈՐՇԻԱՑՈՒՄԸ ԲՆՈՒԹՅԱՆ ՄԵՋ

Գոլորշիացումը բնության մեջ տարածված պրոցեսներից է: Այն երկրագնդի վրա ջրի շրջապտույտի հիմնական բաղադրիչն է: Գնահատումների համաձայն՝ օվկիանոսների, ծովերի, լճերի, ջրամբարների և գետերի մակերևույթներից գոլորշիացման հետևանքով 1 ժամում մոտ 67 կմ^3 ջուր է անցնում մթնոլորտ (Սևանում պարունակվող ջրի քանակի կրկնապատիկը): Հսկայական քանակությամբ ջուր են գոլորշիացնում նաև բույսերը: Գոլորշու խտացման հետևանքով նույն քանակությամբ ջուր է գոյանում, որը տեղումների ձևով վերադառնում է Երկիր:

Գոլորշիացման և խտացման պրոցեսները կարևորագույն դեր ունեն կլիմայի ձևավորման համար: Գոլորշիացումը և խտացումը լայնորեն կիրառվում են տեխնիկայում (կերոսինի, բենզինի և այլ նյութերի ստացում, գազերի հեղուկացում և այլն), արդյունաբերության մեջ և կենցաղում (օրինակ՝ սառնարաններում):